600.0140.19.04.17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

19 ապրիլի 2017 թվականի №140Ա
ք.Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 9-Ի №85Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածների 1-ին մասերը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը, կարգի №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման կարգի 8-րդ կետի 1-ին ենթակետը և հաշվի առնելով «Ջերմուկ Տուրբոշին» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2017 թվականի մարտի 30-ի գրությունը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը որոշում է.

1. Երկարաձգել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2014 թվականի ապրիլի 9-ի «Ջերմուկ Տուրբոշին» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Ջերմուկ-1» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №85Ա որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) «Ջերմուկ Տուրբոշին» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0537 լիցենզիայով (այսուհետ՝ №0537 լիցենզիա) ամրագրված կառուցման ժամանակահատվածը՝ Որոշման մեջ «մինչև 2017 թվականի ապրիլի 20-ը» բառերը փոխարինելով «մինչև 2018 թվականի ապրիլի 20-ը» բառերով:

2. «Ջերմուկ Տուրբոշին» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ №0537 լիցենզիայի պայմանները չկատարելու պատճառով «Ջերմուկ-1» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման ժամանակահատվածը երկարաձգելու համար, սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝

1) մեկամսյա ժամկետում «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության 2016 թվականի հունիսի 6-ի №1267/10/5 գրությամբ №16-0017 երաշխիքի համաձայն երաշխավորված չորս միլիոն յոթ հարյուր վաթսունհինգ հազար դրամ գումարից երկու միլիոն երեք հարյուր ութսուներկու հազար հինգ հարյուր դրամը 900005028130 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.

2) քառասունհինգօրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացնել չորս միլիոն յոթ հարյուր վաթսունհինգ հազար դրամ գումարի նոր երաշխիք՝ մինչև 2018 թվականի հունիսի 4-ը գործողության ժամկետով:

3. «Ջերմուկ Տուրբոշին» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017 թվականի ապրիլի 20-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ՝ Շ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

ք.Երևան
18 ապրիլի 2017թ.